Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Հայաստանում բարձրագույն կրթությունը սկզբնավորվել է մ. թ. V դարում՝ գրերի ստեղծումից հետո, երբ Մեսրոպ Մաշտոցը Վռամշապուհ թագավորի հովանավորությամբ Վաղարշապատում բաց է անում մայր վարժարան, որտեղ դասավանդում էր նաև Սահակ Պարթև կաթողիկոսը:

Այս վարժարանի օրինակով, ամբողջ միջնադարում, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների և ժողովրդի հոգածությամբ Հայաստանի տարբեր մասերում ցածրաստիճան դպրոցներից զատ գործում են բարձրագույն կրթօջախներ, որոնք կոչվում են վարդապետարաններ: Ժամանակին համընթաց հարստանում է ուսումնական ծրագիրը. աստվածաբանական, կրոնադավանաբանական, վկայաբանական առարկաների հետ դասավանդվում էին նաև աշխարհիկ յոթ ազատ արվեստները — քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն և հայոց տոմար, մատենագրություն, գրչություն, մանրանկարչության արվեստ և այլն:

Վարդապետարաններն անկախ էին իրենց գործունեության մեջ, որը նրանց հնարավորություն էր տալիս ինքնուրույն գործելու օտարամուտ գաղափարների դեմ և անհրաժեշտորեն պատրաստելու համապատասխան մասնագիտության տեր անհատներ՝ քարոզիչ, ուսուցիչ, գրիչ, եկեղեցական գործիչ և այլն: Վաղարշապատից հետո աչքի ընկնող ուսումնական հաստատություններ են եղել Դվինի, Մաբենիսի, Սևանի, Տաթևի, Անիի, Սանահինի, Հաղբատի, Բջնիի, Նոր Գետիկի, Խորանաշատի, Հաղարծնի, Խոր-Վիրապի, Մշո Առաքելոց, ինչպես նաև Կիլիկիայի՝ Հռոմկլայի, Սկևռայի, Սսի, Ակների վարդապետարանները:

Հերմոնի վանքի ընդհանուր տեսքը

Մշո Առաքելոց վանքի վարդապետարանը Ներսես Մշեցու բաբունապետությամբ 1282 թ. հիմնավորվում է Վայոց ձորի Աղբերց վանքում և պարապմունքները շարունակում Պողոշ Խաղբակյան և Սմբատ Օրբելյան հայրենասեր և ուսումնասեր իշխանների հովանավորության ներքո:

Լինելով հունական և լատինական դպրությունների գիտակ և գնահատող, հիանալի իմանալով հայրենի դպրությունն ու պատմությունը, Ներսես բաբունապետը մշակում է վարդապետարանի այնպիսի ծրագիր, որն ընկած էր նաև Եվրոպական համալսարանների ուսուցման հիմքում: Դրա համար էլ Գլաձորը կոչվել է «Երկրորդ Աթենք», «իմաստության մայրաքաղաք», «մայր ·իմաստութեան»: Ներսես բաբունապետը աշակերտներին ժամանակի համար անհրաժեշտ կրթություն տալուց հետո ուղարկում էր գավառներ, ժողովրդի մեջ՝ նրան լուսավորելու, պաշտպանելու նրա շահերը, լեզուն, գիրը, հավատը, ազգային ավանդույթները, կենցաղը, ընտանիքը:

Նրա մահից հետո, 1284 թ. բաբունապետությունը ստանձնում է Եսայի Նչեցին: Հովանավոր իշխանների օժանդակությամբ նա ընդարձակում է դպրոցի հնարավորությունները և կարճ ժամանակ անց Գլաձորի հոչակը տարածվում է որպես համահայկական համալսարան, ուր սովորելու են գալիս նույնիսկ վարդապետական աստիճան ստացած մարդիկ նաև հեռավոր Կիլիկիայից:

Հայ մատենագրության մեջ պահպանված են այն առարկաների ցուցակները, որոնք դասավանդվում էին վարդապետարաններում, իսկ Գլաձորում ընդօրինակված ձեռագրերում մենք հանդիպում ենք դրանցում նշված բոլոր գիտություններին և առարկաներին:

Նչեցին գավառներից ընտրում էր ուշիմ երեխաների, որոնց համար Գլաձորում բաց էր արել նաև քահանայական դասարան: Ավարտելուց հետո ոմանք շարունակում էին ուսումը, մյուսները գավառներ վերադառնում, որպես եկեղեցու սպասավորներ:

Հիսունչորս տարի Եսայի Նչեցին գլխավորեց Գլաձորի համալսարանը և երեք հարյուր վաթսուն շրջանավարտների վարդապետական գավազան տվեց: Նրանք սովորում էին 7 — 8 տարի, քննություն հանձնում անցած առարկաներից, մի աշխատություն ներկայացնում պաշտպանության: Քննություն ընդունում էր հանձնաժողովը, իսկ պսակադրում էր «Հանուր Հայաստանեաց բաբունապետ» Եսայի Նչեցին:

«Նա չէ վարդապետ, որ շատ բան անգիր գիտե, այլ նա՝ ով մաքուր վարք ունի — ասում էր Նչեցին: — Մաքուր վարքը կյանքում մարդու հստակ գործունեությունն է, որի նպատակն է՝ «չքանդել հայրենի ցանկապատը, չարհամարհել նախահայրերի սահմանած կարգ ու կանոնը, ուսման միջոցով լուսավորել հայրենիքը, վերադառնալ գավառ, որ գավառը առանց վարդապետական ուսման չմնա»:

Տաթևի վանական համալիրի ընդհանուր տեսքը


«Ի ձեռնտուութենէ Հոգւոյն հանդերձեալ եմք բուռն հարկանել առաջիկա խրողութեանս։ Նախ՝ ուսանել արժան է, թէ զինչ է քերականութիւն, և երկրորդ՝ կամ զինչ յայտնէ անուն քերականութեան։ Երրորդ, թէ վասն էր քերականութիւն կոչի։ Չորրորդ, ո՞յք եղեն գտաւղք այսմ արուեստի։ Հինգերորդ, արհեստ գոլով սա, ունելով ներթակա և կատարումն։ Վեցերորդ՝ եթէ էր աղագաւ՝ փոյթ յանձին կալեալ եղեն վասն քերականութեանս։ Եւթներորդ»... (չյաւելու ինչ յետ այսորիկ, այլ սկիզբն առնէ մեկնութեան, Եւ արդ նախ եկեսցուք, և այլն։

Իսկ ուղղագրեալ օրինակք ունին այսպէս.

«Ի ձեռնտուութենէ Հոգւոյն հանդերձեալ եմք բուռն հարկանել առաջիկա խրողութեանս. Նախ՝ ուսանել արժան է թէ զինչ է քերականութիւն, կամ զինչ յայտնէ անուն քերականութեան. և վասն էր գրեալդ քերել կոչի։ Երրորդ՝ ո՞յք եղեն գտաւղք այսմ արուեստի։ Չորրորդ՝ եթէ էր աղագաւ փոյթ յանձին կալեալ եղեն վասն քերականութեան։ Եւ արդ նախ եկեսցուք» և այլն։

Եսայի Նչեցու «Քերականության վերլուծության» ինքնագիրը

Եսայի Նչեցու մահից հետո 1338 թվականին համալսարանը Տիրատուր Կիլիկեցու ղեկավարությամբ տեղափոխվում է Հերմոնի վանք և շարունակում դասերը նույն ծրագրով:

Տիրատուրի մահից հետո քաքունապետությունը ստանձնում է Հովհաննես Որոտնեցին և 1356 թ. համալսարանը տեղափոխում է հայրենի Ոստան գավառ: Այնտեղ այն գործում է քսանութ տարի, մինչև թուրքերի հալածանքները 1384 թ., և երկու տարի թափառելուց հետո հաստատվում Ապրակունիսում:

Ձեռագիր № 10525, էջ 351

Հովհաննես Որոտնեցու մահից հետո (1386 թ.) նոր բաբունապետ Գրիգոր Տաթևացին ուսումնագիտական և դավանաբանական պայքարի եռանդուն գործունեություն է ծավալում լենկթեմուրյան աշխարհավեր արշավանքների ժամանակաշրջանում:

Որոտավանքի և Տաթևի շրջանավարտները ևս Գլաձորի սաների նման դասասացությունը զուգակցում էին միարարների և մահմեդականացման դեմ եռանդուն պայքարին, գրում, խմբագրում էին եկեղեցական ժողովածուներ, որոնց մեջ զետեղում էին հատվածներ Ագաթանգեղոսի, Կորյունի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու և այլ պատմիչների հայրենասիրական գործերից: Շարադրում և Հայսմավուրք էին մուծում ազգային սովորությունների, հավատի, ընտանիքի, լեզվի համար նահատակվածների պատմությունները՝ եկեղեցում ժամասացության ժամանակ ընթերցելու համար:

Տաթևացու պատգամը կատարելով (նա մահացավ 1410 թ), նրա աշակերտներ Թովմա Մեծոփեցի և Հովհաննես Հերմոնեցի բաբունապետերի ջանքերով 1441 թ. կաթողիկոսարանը Կիլիկիայի Սիս մայրաքաղաքից տեղափոխվեց իր ավանդական աթոռանիստը՝ Վաղարշապատ, ս. Էջմիածին:

Միջնադարյան հայ դպրոցները հետագայում շարունակեցին ուսումնակրթական, լուսավորչական իրենց գործունեությունը և նախնիների ավանդներին հավատարիմ մնալու համար իրենց պայքարը՝ օգտագործելով Հայոց համալսարանի շուրջ հարյուր հիսունամյա փորձը և մատենագրական վիթխարի ժառանգությունը, որը ստեղծվել էր մայր համալսարանի և դուստր դպրոցների սաների ու բաբունապետերի ջանքերով: Դրանք պատմության, լեզվի և գրչության արվեստի դասավանդման, փիլիսոփայական, գեղարվեստական գրականության, արվեստի վերաբերյալ գործեր են, վարքեր-վկայաբանություններ, դավանաբանության, աստվածաբանության, բնական գիտություններին վերաբերող շարադրանքներ և մեկնություններ, որոնք օգտագործվել են որպես դասագրքեր: Նրանք թողել են

Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի

եկեղեցածիսական ժողովածուների խմբագրություններ և սրբագրություններ (Հայսմավուրք, Տոնական, Գանձարան, Մաշտոց, Աղոթագիրք), կատարել են հազարավոր ձեռագրերի ընդօրինակություններ, որոնք իրենց մեջ ամբարում են գիտության տարբեր բնագավառի վերաբերյալ թարգմանական և հայ հեղինակների ստեղծագործություններ:

Հարյուր հիսուն տարի և նրանից հետո միջնադարյան Հայաստանը զգացել է համալսարանականների գործող ու նորոգող կենսունակ ոգին, որն իր ժողովրդի ստեղծագործելու, կառուցելու, նորոգելու և նորոգվելու հավերժական ոգու դրսևորումներից մեկն է:

Տակավին վերջերս՝ 1984 թ., միջազգային մասշտաբով և Հայկական ՍՍՀ կառավարության որոշմամբ Երևանում մեծ շուքով նշվեց Գլաձորի համալսարանի 700-ամյա հոբելյանը: Այդ առիթով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ու օգտագործման վարչությունը վերականգնեց ու բարեկարգեց Եղեգնաձորի շրջանի մի շարք հուշարձանները, իսկ շրջանի Վերնաշեն գյուղի եկեղեցում բացեց հայկական ուսումնագիտական մտքին և հատկապես Գլաձորի համալսարանին նվիրված թանգարան:

Գլաձորի համալսարանի մանրանկարիչ Թորոս Տարոնացի (ձեռագիր № 353)

ԳՄԴ 85.113(2Հ)1
Մ 151

ԱՐՏԱՇԵՍ ՍԻՄՈՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԳԼԱՁՈՐՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Երևան «Հայաստան» 1987

АРТАШЕС СИМОНОВИЧ МАТЕВОСЯН
ГЛАДЗОРСКИЙ УНИВЕРСИТЕТ
(На армянском языке)
Ереван «Айастан», 1987 г.

Խմբագիր՝ **Ա. Ս. Ոսկանյան**
Նկարիչ՝ **Լ. Խ. Խաչատրյան**
Տեխն. խմբագիր՝ **Ց. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Վ. Խաչատրյան**

Մ $\frac{4902020000}{701(01)86}$ պատվեր

© ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2Կ

ՎՖ 01154: Տպաքանակ՝ 10000, պատվեր՝ 5182: Գինը՝ 15 կոպ.:
Ֆորմատ՝ 70×108 1/32: 0,52 պայմ. տպ. մամ., 0,48 հրատ. մամ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28
Издательство «Айастан» Ереван — 9, ул. Исаакяна 28
ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ադմիրալ Իսակովի պող. 48:
ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.